

Ա Ռ Հ Ա Յ Ս

«Շատ է աւուրն չար իւր.»

ՄԱՍԻՔ. ԳԼ. 2. — 34:



Ո՛հ, բաւական իսկ դատն են կեանք մահացուին,
 Եւ բաւականէն աւելի կեանք ազգային.

Անուշըրներք սո՛վ Հայեր
 Յատուածաշունչ խուրբ սէր:

Եղբարք, ով որ Հայու անուն կրկըրէ՝
 Զվիճակ Հայուն կըրել յերկնից կընքեալ է.
 Ո՛ւր եւ երթայ՝ հեա ինքեան
 Տանի զՀայ շուքն անբաժան:

Հարուստ, աղքատ, յիշեցէք մէկ ունիք հայր,
 Ու ամէնքնիդ ալ մի եւ նոյն լացաւ մայր.
 Հային ամենուդ է ծընող,
 Եւ Ազգութիւն՝ օրորող:

Հայք, ծուռ աչօք նայիք յեղբարսդ հարազատ.
 Ո՛չ նոյն բղբաչ ունիք կընիքս իճակատ.
 Ո՛չ նոյն բղբաչ բեռն իյուս
 Շարկեց Աստուած ամենուս . . .

Ի՞նչ աւելի կուզէք միմեանց կոխել վիզ.
 Ո՛ր Հայ այսօր կարէ պարծիլ բարձրավիզ.
 Ամենքնուս ալ նոյն երկաթ
 Զըջախջախեց բղբադաթ:

Ի՞նչ աւելի կուզէք արցունք թափել տալ.
 Միթէ աչքերդ ս՛չ միշտ լեցուած են իլալ . . .
 Ի՞նչսու զկաթիւն ազգային
 Կուզէք ցընդել ձեր կըրքին:

Ի՞նչ աւելի կուզէք միմեանց տալ ցաւեր.
 Միթէ ս՛չ շատ իսկ ունիմք ցաւս, սո՛վ Հայեր.
 Ո՛ր Հայուն սիրան է անվէր.
 Ո՛ր մասն անախ ողջ հասեր:

Ի՞նչ աւելի ջանայք կոխել ըզմիմեանս.
 Զէ բաւական այսչափ ազգաց դու կոխանս.
 Օտարք իշունչդ են ինայեր,
 Դուք զայն մարէք, սո՛վ Հայեր:

Ի՞նչ աւելի աւրել միմեանց խեղճ անուն.
 Երկրիս երես մնացեր Հայունն է անուն.
 Ո՛հ, թող այլ լաւ է կորսուի,
 Բան բամբասամբ ձեր պըղծուի:

Ի՞նչ աւելի հետ էք զիրար կործանել,
 Ամէնքս աւեր, ամէնքս իհնգ եմք դարձել.
 Ով յաւերաց շինէ տուն,
 Ձրդ իմանար նա հովուն:

Հայեր, զամէնքս երկինք հաւասար է նայեր,
 Հաւասար լուծ, ամօթ եւ ցաւ է բաժներ.
 Ձի անբաժանք իրարու
 Մընամք եղբարք սիրարկու:

Իսկ ով կուզէ Հայութենէն բաժնուիլ,
 Նրման ճիւղոյն է զոր կըտրեն իյՍպրիլ.
 Չունի արմատ կըչորնայ,
 Եւ իկըրակ նետուի նայ:

ԸզՀայ արմատ Աստուած դեռ չէ չորցրնել.
 Այսչափ դարեր՝ ո՛չ, ո՛չ իզուր է խնայել.
 Մեր հողն է Դրահաւ.—Օր մը նոր
 Կըրնամք ծաղկիլ զօրաւոր:


Հայեր, Հայեր. երբ կառնուք սուր անխընայ,
 Ու յարձակիք վերայ եղբօրդ Հայ առ Հայ,
 Վախցէք անգութ ձեր տապար
 Յերկնախընամ զարնէ ծառ:

Ամէն տերեւն որ թօթափէք այն ծառէն՝
 Աստուած համրեր է մէկ առ մէկ երկընքէն,
 Որդն որ ծառոյն կըկըռուի՝
 Ունի դմըշակ թըշնամի:

Երկնի Մշակէն վախցէք. — գիտէ որ կերպով
 Պիտի մեծնայ ճիւղն ու տերեւ ատենով.
 Կըրնա՛րմատ տալ տերեւին,
 Ըզքեզ փոխել դըժնիկին:

Ո՛հ, շատ են շատ հողմունք որ զմեզ են ցաներ,
 Մի Հայն Հայուն դէմ՝ գըրդուէ նոր մըրրիկներ.
 Ո՞ր մասն երկրի մընացեր
 Ուր Հայ պանդուխտ չէ լացեր: . . .

Ձէ. — Թէ ցըրուած եւս եմք յիրեարց հեռաւոր՝
 Ո՛վ Հայկազունք, լինիմք սըրտով միաւոր.
 Թէ քիչ տերեւ եմք մնացել՝
 Շատ եմք իպսակ մի հիւսել:



Հրամայեցաք տպագրել. իԹեոզոսիա, ի25 Հոկտեմբերի 1860. Գարրիէլ Վ. Այվազեան:

Իտպարանի Խալիպեան Ուսումնարանի Հայոց: